ԱՐՄԵՆ ՅՈԼԱԿԻ ՄԱՐՈՒՔՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծննդյան տարեթիվ՝ 06.07.1976
Ծննդավայր՝ ՀՀ, ք. Վանաձոր

Վանաձորի Ա.Ս. Պուշկինի անվան թիվ 4 միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո 1993-1998 թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում: 1998 թ. ընդունվել է ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի ասպիրանտուրան: 2002 թ. պաշտպանել է «Հայոց ցեղասպանությունը և Ռուսաստանը 1915-1917 թթ.» թեմայով թեկնածուական ատենախոսություն: 2004 թ. ստացել է դոցենտի գիտական կոչում: 2018 թ. պաշտպանել է «Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմքերը» թեմայով դոկտորական ատենախոսություն: 2019 թ. ստացել է պրոֆեսորի գիտական կոչում:

1998 թ. Ա. Մարուքյանը աշխատանքի է ընդունվել ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտում որպես կրտսեր գիտաշխատող, այնուհետև նշանակավել է ավագ գիտաշխատող, գիտական քարտուղար: 2004 – 2007 թթ. Ա. Մարուքյանն աշխատել է «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանում որպես ուսումնական գծով պրոռեկտոր:

2008 թվականից Ա. Մարուքյանը աշխատանքի է անցել ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտում որպես ավագ գիտաշխատող, այնուհետև նշանակվել է առաջատար գիտաշխատողի պաշտոնում: 2011 թվականից Ա. Մարուքյանը Պատմության ինստիտուտի Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության բաժնի վարիչն է, 004 «Հայոց պատմության» մասնագիտական խորհրդի անդամ է:

2004 թվականից Ա. Մարուքյանը դասավանդում է Ռուս-հայկական /Սլավոնական/ համալսարանում, իսկ 2011 թվականից ԵՊՀ պատմության և միջազգային հարաբերությունների ֆակուլտետներում: Ա. Մարուքյանի գիտական հետաքրքրությունների շրջանակում են Հայոց նոր և նորագույն պատմության, ցեղասպանությունների պատմության, Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության, Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնահարցերը: Ա. Մարուքյանը հայերեն ռուսերեն և անգլերեն լեզուներով հեղինակել է 8 մենագրություն, ավելի քան 70 գիտական հոդված, որից՝ 2 ընդգրկված են Scopus/Web of science (Q 1, 2025) ՄԳՇ-ում, նաև 4 կոլեկտիվ

մենագրությունների համահեղինակ է: Հեղինակել է փաստաթղթերի և նյութերի 4 ժողովածուներ և 2 ուսումնամեթոդական ձեռնարկներ: Ա. Մարուքյանը 2014-2021 թթ. հանդիսացել է Հայաստանի երիտասարդական հիմնադրամի և Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի ֆինանսավորմամբ իրականացվող 4 դրամաշնորհի/թեմայի ղեկավար: Ա. Մարուքյանի գիտական ղեկավարությամբ 2 ասպիրանտ և մեկ հայցորդ (Ն. Շարաֆյան (2022), Վ. Հախոյան (2024), Ա. Ոսկանյան (2024)) հաջողությամբ պաշտպանել են թեկնածուական ատենախոսություններ: Ա. Մարուքյանը գիտական զեկուցումներով, դասախոսություններով և ելույթներով հանդես է եկել հանրապետական և միջազգային տասնյակ գիտաժողովներում, կլոր սեղաններում, գիտագործնական սեմինարներում, Սփյուռքի տարբեր համայնքներում, ԼՂՀ ՊԲ զորամասերում և այլն: Ա. Մարուքյանը պարգևատրվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի պատվոգրով, ՀՀ ՊՆ «Դրաստամատ Կանայան» մեդալով և այլն:

Ա. Մարուքյանն անկուսակցական է, ամուսնացած է, ունի երկու զավակ: